ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» դեկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամնետի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամնետի համակարգչային ծառայության մասնագետ,

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

1.1 «Էյ. Էմ. Եքս.Միկրո» ՍՊԸ-ն, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն և «Ռվ Պրոջեկտս» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

1.2 «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից համակարգում կցված փաստաթուղթը ներկայացված չէ հրավերով սահմանված ձևին (Հավելված 3)-ին և հրավերի պայմաններին համապատասխան, ինչպես նաև բացակայում է (Հավելված 2)-ը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ 11-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«Էյ. Էմ. Եքս.Միկրո» ՍՊԸ-ի, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ի և «Ռվ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և գնահատվում են բավարար:

3. Տեղեկատվություն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Էյ. Էմ. Եքս.Միկրո» ՍՊԸ-ին,
2-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին,
3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին,
4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին,
7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Ռվ Պրոջեկտս» ՍՊԸ-ին,

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հիմք ընդունելով Կարգի 23-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստն և հաջորդ նիստը հրավիրել 2018թ. դեկտեմբերի 07-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

- արձանագրված անհամապատասխանությունների մասին համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները (Չափաբաժին 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Մելքոնյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Պետրոսյան

(ստորագրություն)

Ա. Թամրազյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝
Դ. Թովմասյան

(ստորագրություն)